

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

ԹԱՄԱՐԱ ԱՐԹՈՒՐԻ ԱՆՏՈՆՅԱՆ

«ԷԴՎԱՐԴ ՕԼԲԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԸ»

Ճ.01.07-«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության մասին

ԹԱՄԱՐԱ ԱՐԹՈՒՐԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ «ԷԴՎԱՐԴ ՕԼԲԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԸ» թեմայով ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարի ամերիկյան թատերգության ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Էդվարդ Օլբիի ստեղծագործական մեթոդի վերհանմանը հեղինակի՝ ստեղծագործական տարբեր փուլերի պիեսների տիպաբանական և համեմատական վերլուծության միջոցով:

Ատենախոսությունը գալիս է հավաստելու Էդվարդ Օլբիի յուրահատուկ դերը ամերիկյան դրամատուրգիայում, այն հեղինակի ստեղծագործության հստակ, հայեցակարգային ներկայացումն է՝ ատենախոսի կողմից բացահայտած փուլերի վերլուծության միջոցով: Քննարկվում են գրողի ստեղծագործական տարբեր շրջանների պատկանող պիեսները, ատենախոսը համոզիչ ապացուցում է Է.Օլբիի կապը 20-րդ դարի մի շարք գեղագիտական ուղղությունների հետ, բացահայտում է հեղինակի ստեղծագործական մեթոդի յուրահատկությունը և սահմանում այն որպես սինթետիկ: Ատենախոսությունում կարևորվում է Էդվարդ Օլբիի տեղը և դերը ամերիկյան թատերգության զարգացման գործում:

Աշխատանքի առավելություններից է հայ գրականագիտության մեջ քիչ ուսումնասիրված գրողի ստեղծագործության հետ ծանոթությունը: Ատենախոսը կատարում է Է.Օլբիի ստեղծագործական ուղու սեփական բաժանումը երեք

շրջանների՝ ատենախոսության գլուխներում հիմնավորելով այդ բաժանումը այն պիեսների վերլուծությամբ, որոնք ակնհայտ ներկայացնում են հեղինակի ստեղծագործական մեթոդի փոփոխությունները, որով էլ ապահովվում է հետազոտության **գիտական նորույթը**:

Սույն ուսումնասիրությունն **արդիական է**, քանի որ այնտեղ արծարծված խնդիրներն այսօր էլ ժամանակավրեպ չեն և գիտական հանրույթը շրջանում մշտապես տարակարծության առիթ են ներկայացնում, ուստի այդ խնդիրներն արծարծող հեղինակների երկերի քննությունը հաստատապես կարևոր է և արդիական:

Ատենախոսության առաջին՝ «ԱՔՍՈՒՐԴԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ՌԵԱԼԻՉՄԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՍԻՆԹԵԶԸ ԷՕԼՔԻԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» գլխում ատենախոսի ուշադրության կենտրոնում Օլբիի ստեղծագործական վաղ շրջանն է, որն ատենախոսը սահմանում է որպես հեղինակային փնտրությունների շրջան: Ատենախոսը վերլուծում է այս շրջանից վերցված չորս պիեսները («Ի՞նչ էր պատահել գազանանոցում» (1959), «Ամերիկյան երազանք» (1961), «Ո՞վ է վախենում Վըրջինիա Վոլֆից» (1962), «Նուրբ հավասարակշռություն» (1966)) և փաստում դրանցում առկա Աբսուրդի թատրոնի և ռեալիզմի գեղագիտական սկզբունքների սինթեզը: Հատկանշական է, որ ատենախոսը վերհանում է այս շրջանի պիեսներում առկա ընտանիքի որոշակի մոդել, քննում այն ռեալիզմի տեսանկյունից և եզրահանգում, որն այն կրում է ինքնակենսագրական բնույթ:

Գնահատելի է, որ ատենախոսը զուգահեռներ անցկացնելիս Օլբիի և Աբսուրդի թատրոնի այլ հեղինակների (Ս.Բեքետ, Է.Իոնեսկո և այլք) միջև ներկայացնում է ոչ միայն Օլբիի թատերգության նմանությունները, այլ նաև տարբերությունները: Օրինակ, «Ի՞նչ էր պատահել գազանանոցում» պիեսի վերլուծության ընթացքում քննելով Օլբիի և Աբսուրդի թատրոնի միջև կապը, ատենախոսն իրավամբ նշում է, որ ի տարբերություն դասական Աբսուրդի թատրոնի պիեսների, որոնք զուրկ են

սյուժեից, Օլբիի պիեսներում կա տրամաբանական սյուժե:

Ատենախոսության երկրորդ՝ «ԱԲՍՈՒՐԴԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՍԻՆԹԵԶԸ Է.ՕԼԲԻԻ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» գլխում ատենախոսի նպատակն է մանրամասն ուսումնասիրել Օլբիի երկրորդ շրջանի պիեսները, վերհանել դրանցում Աբսուրդի թատրոնի և պոստմոդեռնիզմի առաձնահատկությունները և ուսումնասիրել հեղինակի ստեղծագործական մեթոդի հետագա փոխակերպումները: Երկրորդ շրջանի երեք պիեսների («Լոլիտա» (1981), «Ամուսնական խաղ» (1987), «Երեք բարձրահասակ կանայք» (1991)) ուսումնասիրությունը ատենախոսին հնարավորություն է տալիս եզրակացնել, որ Օլբիի պիեսներում հետզհետե նվազում են ռեալիզմի տարրերը՝ իրենց տեղը զիջելով պոստմոդեռնիզմին, իսկ ստեղծագործական մեթոդը շարունակում է մնալ սինթետիկ:

Հատկապես հաջողված է ատենախոսության երրորդ գլուխը, որը ներկայացնում է Է. ՕԼԲԻԻ ԵՐՐՈՐԴ՝ ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Ատենախոսության հեղինակն այս գլխում ուսումնասիրում է Օլբիի ուշ շրջանի պիեսների («Փոքրիկի մասին պիեսը» (1998), «Այժը, կամ ո՞վ է Սիլվիան» (2000), «Թը՛խկ, թը՛խկ: Ո՞վ կա այդտեղ:» (2003)) յուրահատկություններն ու բնորոշում այս շրջանը որպես պոստմոդեռնիստական: Ըստ ատենախոսի, Օլբիի ստեղծագործությունների կապը պոստմոդեռնիզմի հետ այս շրջանում ավելի է ամրապնդվում, իսկ պիեսներում առկա արսուրդը դառնում է պոստմոդեռնիզմի հատկանիշներից մեկը:

Ատենախոսության *Եզրակացություններ* բաժնում ներկայացված են այն հիմնական դրույթները, որոնց ատենախոսը հանգել է ուսումնասիրության արդյունքում և որոնք պատասխանն են ատենախոսության սկզբում առաջադրված հարցադրումներին:

Ինչպես ատենախոսն է նշում, հայ գրականության մեջ Օլբին առանձին ուսումնասիրության չի արժանացել /տես՝ ատենախոսություն, էջ 15/, ուստի

աշխատանքի դրական կողմերից առանձնահատուկ պետք է նշել ատենախոսի կողմից Օլբիի ստեղծագործությանը նվիրված տեսական քննադատական նյութի ներկայացումը, ինչպես նաև, գրական ոճերի և ժանրերի սինթեզման առանձնահատկությունների վերլուծությունը:

Չափազանց դրվատելի է այն փաստը, որ ատենախոսը պարբերաբար զուգահեռներ է անցկացնում Օլբիի և այլ հեղինակների /Բրեխտ, Սթայնբեք, Բեքետ, Մելվիլ, Չեխով, Շեքսպիր և այլն/ միջև, գտնում միջտեքստային բազմաթիվ առնչություններ, տարբերություններ և նմանություններ: Եթե միայն հաշվի առնենք հեղինակների այն ծաղկաբույլը, որոնց երկերի հետ միջտեքստային կապերին անդրադարձ է կատարվում ատենախոսության մեջ, ապա կարելի է համարել, որ Օլբիի երկերի քննությանն ուղղված այս աշխատանքն արդեն իսկ հետաքրքիր է, իսկ թեմայի ընտրությունը՝ արդարացված: Հետաքրքրական են նաև պիեսների հերոսների անունների հետ կապված վերլուծությունները, մշակութային հղումները, Աստվածաշնչից, հունական և եգիպտական դիցաբանությունից բերված դրվագները, որոնք գործածվել են Օլբիի պիեսներում այս կամ այն կերպարի այս կամ այն հատկանիշը առավել արտահայտիչ և խորհրդանշական դարձնելու համար: Այս ամենի շնորհիվ ատենախոսն ապահովում է Օլբիի պիեսների առավել համապարփակ և մանրակրկիտ վերլուծությունը:

Այրուհանդերձ, ԹԱՄԱՐԱ ԱՆՏՈՆՅԱՆԻ ատենախոսությունն առավել կատարյալ տեսնելու ցանկությունից ելնելով է, որ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում և առաջարկ, որոնք, կարծում ենք, ատենախոսը կարող է շահեկանորեն հաշվի առնել գիտական հետազոտության ընթացքում: Մասնավորապես՝

1. Ցանկալի կլիներ առավել հստակ ներկայացնել թեմայի **արդիականությունը**, քանի որ այն ոչ միայն պայմանավորված է ամերիկյան թատերգության մեջ է. Օլբիի յուրահատուկ տեղի բացահայտմամբ և, ինչպես նշում է ատենախոսը այն փաստով, որ նա սինթեզում է ամերիկյան թատերգության հիմնական առանձնահատկությունները՝ նախանշելով նոր, պոստմոդեռնիստական

թատերգության հիմնական միտումները /տես՝ սեղմագիր, էջ 4/, այլև, կարծում ենք, առավելապես այն հանգամանքով, որ Օլբին իր պիեսներում արծարծում է այնպիսի թեմաներ և մոտիվներ, որոնք չափազանց արդիական են, և այսօր էլ գրականագիտական հանրույթի ուշադրության կիզակետում են:

2. Ինչպես նշում է ատենախոսը՝ Օլբիի պիեսները թարգմանված չեն հայերեն, և գուցե դա է պատճառը, որ ատենախոսության որոշ էջերում գրողի ստեղծագործություններից բերված մեջբերումները փոքր-ինչ երկարաձգված են, կամ էլ հանդիպում են անհարթ և խմբագրման կարիք ունեցող հայերեն թարգմանություններ /տես՝ ատենախոսություն, էջ 76,77, 78, 82, 83,84 և այլն/:
3. Ատենախոսն աշխատանքի 5-րդ էջում գրում է, որ «20-րդ դարի ամերիկյան թատրոնի պիեսների հաջորդ խումբը, ըստ Վ.Շամինայի, **ընդհանրական** դրամաներն են, որոնք անդրադառնում են ամերիկյան հասարակության հենասյուն համարվող թեմաներից մեկին՝ **ընտանիքին, որը կրոնի և սեփականության** հետ կազմում է ամերիկյան հասարակարգի առանցք հանդիսացող «ամերիկանիզմ» գաղափարը»:

Այս հաստատման հետ կապված երկու դիտարկում ունենք. նախ՝ չի ներկայացված Վ. Շամինայի խոսքի հղումը: Երկրորդ, «ամերիկանիզմ»-ը ոչ թե գաղափար է, այլ գաղափարախոսություն¹, և ունի երկու իմաստ՝ լեզվաբանության մեջ այն ամերիկյան անգլերենին հատուկ լեզվական երևույթներն են, իսկ ավելի լայն առումով՝ այն «ազգային արժեքների, պատկերացումների, մշակութային ինքնության, խորհրդանիշերի համակարգ է և ազատության, հավասարության, ժողովրդավարության գաղափարներին հավատարմության գրավական», և միայն ընտանիքը, կրոնը և սեփականությունը չէ /ի դեպ, հասկանալի չէ, թե սեփականություն ասելով ատենախոսն ինչ նկատի ունի/, որ ներառվում են «ամերիկանիզմ» եզրույթում:

¹ <https://dictionary.cambridge.org/dictionary/english/americanism>; <https://languages.oup.com/google-dictionary-en/>; <https://www.jstor.org/stable/30031659>

Նույն էջում խոսվում է «ամերիկյան ազգի սինթետիկ բնույթի» մասին, որը նույնպես անհասկանալի ձևակերպում է: Ատենախոսը, թերևս, նկատի ունի ամերիկյան հասարակության բազմազգ, բազմաէթնիկ և բազմաշերտ բնույթը: Այս սահմանումներին կարևորություն ենք տալիս, քանի որ ատենախոսի ուսումնասիրության առարկան Օլբիի թատերգությունն է, որի հիմնական թեմաները սերտորեն առնչվում են ամերիկյան արժեքների և կենսամտածողության հետ:

4. Ատենախոսը ներկայացնում է նաև է Օլբի-գրողի գեղագիտությունն ու պոետիկան, օգտագործած արտահայտչամիջոցները՝ բառախաղ, գրական անդրադարձեր, փոխաբերություններ: Սակայն, կարծում ենք, որ, օրինակ, ատենախոսության 40-42-րդ էջերում խոսելով երեխայի մասին որպես «ամերիկյան երազանքի» փոխաբերություն, կարելի էր առավել հանագամանորեն բացահայտել այդ փոխաբերության իմաստը, քանի որ ամերիկյան երազանքը գրողի երկերում առանցքային թեմաներից է:
5. Ատենախոսության մեջ տեղ են գտել զուտ խմբագրական բնույթի վրիպակներ, եզրույթների օգտագործման որոշ անհարթություններ կամ օտարաբանություններ, օրինակ՝ *Ֆրագմենտար* բառի փոխարեն՝ կարելի էր գործածել *դրվագային* կամ *հատվածային* բառերը /տե՛ս՝ ատենախոսություն, էջ 17/, *ինտերպրետատիվության* փոխարեն՝ *միջտերքատայնությունը* /տե՛ս՝ ատենախոսություն, էջ 134/, *դեկոնստրուկցիայի* փոխարեն՝ *ապակառուցում* բառը /տե՛ս՝ ատենախոսություն, էջ 52, 54, 117, 119, 120, 126/, *ժանգյորի* փոխարեն՝ հայերեն՝ *ձեռնածու* տարբերակը և այլն: Կամ՝ *տատիկ* բառը մի տեղ գրված է մեծատառով, մեկ այլ տեղ՝ փոքրատառով /տե՛ս՝ ատենախոսություն, էջ 66/, հայերենում չկա *անունակություն* բառ /տե՛ս՝ ատենախոսություն, էջ 103/ փոխարենը կարելի է ասել՝ *անկարողություն*, *ոչնչի չընդունակ* արտահայտության փոխարեն կարելի է գրել *անընդունակ*: Կամ՝ ատենախոսության մեջ բազմիցս օգտագործվում է *մեզ թույլ կրանք չհամածանել* արտահայտությունը /տե՛ս՝ ատենախոսություն, էջ 15, 57, 80, 124, 132/: Կարծում ենք, հայերենին ոչ հարիր այս արտահայտությունը կարելի էր փոխարինել, օրինակ, *մենք համամիտ չենք, կամ այլ կարծիք ունենք այս կամ այն երևույթի նկարմամբ* արտահայտություններով: Կամ՝ անգլերեն *pet* բառը ատենախոսը թարգմանել

մարդ, որին վերաբերում են անսովոր գուրքորսանքով²: Այս սահմանումը, կարծում ենք, Օլբիի պիեսում իմաստային կարևոր լիցք ունի և արժեր դրան անդրադառնալ:

Եվ, այդուհանդերձ, վերը նշվածը չի նսեմացնում ատենախոսի կատարած ուսումնասիրության արժանիքները: **ԹԱՄԱՐԱ ԱՐԹՈՒՐԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ «ԷԴՎԱՐԴ ՕԼԲԻԻ ՍՏԵՂՃԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԸ»** թեմայով ատենախոսությունը ընդգրկուն ուսումնասիրություն է և բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջները:

Սեղմագրում ներկայացված դրույթները և տպագիր աշխատանքները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Վերը նշվածը հնարավորություն է տալիս միջնորդել ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 066 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտական խորհրդին՝ **Թամարա Արթուրի Անտոնյանի «Էդվարդ Օլբիի ստեղծագործական մեթոդի տրանսֆորմացիաները»** թեմայով ատենախոսության համար շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Գայանե Եղիազարյան
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
«Վ. Բոյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի
Անգլերենի ամբիոնի վարիչ

Գ. Եղիազարյանի ստորագրությունը հաստատում եմ
Հասմիկ Փիլավջյան
«Վ. Բոյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի
գիտական քարտուղար



14.07.2023

² <https://www.merriam-webster.com/dictionary/pet>